ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/05

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ

Բողոք բերող՝ «Ջատեգշին» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, կահույքի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Ջատեգշին» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 01.02.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոցներ Ընթացակարգը կասեցնելու մասին:

2. Դադարեցնելու.

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.01.2021թ.-ի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացրած որոշումը,

- պայմանագիր կնքելու մասին որոշումը,

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հանձնարարել «Ջատեգշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը Ընթացակարգի 1-ին, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ չափաբաժինների մասով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից,

4. Պատվիրատուին հանձնարարել պայմանագրի կատարման ժամկետը հետաձգել:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 01.02.2021թ.-ին:

02.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/05 համարի ծածկագիրը:

10.02.2021թ.-ին և 19.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.02.2021թ.-ին:

2. «Ջատեգշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ջատեգշին» ՍՊԸ-ն 01.02.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար կահույքի ձեռքբերման նպատակով 2021թ. հունվարի 15-ի ժամը՝ 15:21-ին հայտարարված N ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետև՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «ՋԱՏԵԳՇԻՆ» ՍՊԸ-ն: Հայտերի բացման օր է հանդիսացել՝ 2021թ. հունվարի 22-ը: «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 2021թ.-ի գնումների պլանի 2021 թվականի հունվարի 15-ի փոփոխությամբ հաստատվել և հրապարակվել է Ընթացակարգով ձեռքբերվող առարկաները նախատեսված ֆինանսական միջոցներով (կցվում է), որը gnumner.am կայքում (այսուհետև՝ Կայք) հրապարակվել է 2021 թվականի

հունվարի 15-ին ժամը՝ 15:10-ին, վերջինս հիմնավորելու համար կցվում է համակարգչից արտապատված համապատասխան էջը, որում արտացոլված է Ընթացակարգի հայտարարության և հրավերի, ինչպես նաև գնումների պլանի համապատասխան փոփոխության հրապարակման օրերը և ժամերը: Ընթացակարգի հրավերը հանդիսանում է Կայքում հրապարակված հրավերների օրինակելի ձևը, սակայն որում առկա են նաև այնպիսի օրենսդրական հղումներ, որոնք տվյալ Ընթացակարգի համար արդեն իսկ կիրառելի չեն, մասնավորապես Գնումների մասին ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դրույթները, քանի որ.

1) ֆինանսական միջոցները արդեն իսկ գնումների պլանի համապատասխան փոփոխությամբ նախատեսված են եղել և վերջինս հրապարակվել է ավելի շուտ, քան Ընթացակարգի հայտարարությունն ու հրավերը (ընդ որում՝ տվյալ փոփոխության մեջ առկա չէ նշում Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով կատարվող գնումների մասին, մինչդեռ նախնական գնումների պլանում առկա է տվյալ նշումը, որոնք նույնպես կցվում են),

2) Ընթացակարգի հրավերով սահմանված է գնման ժամանակացույց, որտեղ նշվել է ձեռքբերման պայմանը՝ մատակարարումը պետք է իրականացվի մինչև 01.03.2021թ.,

3) Ընթացակարգի հրավերով սահմանված է վճարման ժամանակացույց աճողական կարգով նշված համապատասխան տոկոսներով, ինչպես նաև գնումների պլանով նախատեսված համապատասխան հոդվածներով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 2021 թվականի հունվարի 22-ի թիվ 2 արձանագրության (կցվում է) 4-րդ կետով որոշում է կայացրել կիրառել Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով և ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 5-րդ մասի բ. պարբերությամբ սահմանված դրույթները, բանավոր կերպով հիմնավորելով, որ հրավերում առկա են նշված հղումները, այդ իսկ պատճառով կիրառելի են, սակայն կոպտորեն խախտվել է մեր կազմակերպության իրավունքները գնումների մրցակցային պայմաններում, քանի որ որոշ չափաբաժինների մասով, մասնավորապես՝ 1-ին, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ չափաբաժինների մասով, մեր կազմակերպությունը հանդիսացել է բավարար հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գին առաջարկած մասնակից, որին պետք է առաջին տեղ զբաղեցնող ճանաչեր տվյալ չափաբաժինների մասով, միչդեռ խախտելով օրենսդրության պահանջները Ընթացակարգը չի կազմակերպել գնման գործընթացի միասնական կանոններով՝ մրցակցային, թափանցիկ, համաչափ և ոչ խտրական հիմունքներով, ինչի արդյունքում բողոքարկմամբ փորձում ենք

վերականգնել մեր կազմակերպության իրավունքները և շահերը, ինչը մեր կազմակերպության գործողության կամ անգործության հետևանքը չէ, ուստի նաև մատակարարման ժամկետը խնդրում ենք հետաձգել:

Հանձնաժողովի արձանագրությունը և որոշումը կայացվել է Օրենքի խախտումներով, ինչը չի բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից: Այսպես խախտվել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, 15-րդ հոդվածի 6)-րդ մասով, 26-րդ հոդվածի 1-ին մասի 5)-րդ կետով և 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետով, Կարգի 14-րդ կետի 5)-րդ ենթակետով, 16-րդ կետով, 27-րդ կետով և 40-րդ կետի 5)-րդ ենթակետով սահմանված պահանջները:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված է, որ.

«2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.»:

Օրենքի 15-րդ հոդվածի 6)-րդ մասով սահմանված է, որ.

«6. Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է: »:

Օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 5)-րդ կետով սահմանված է, որ.

«1. Պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով, որը՝

5) որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին):»:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1)-ին կետով սահմանված է, որ.

«2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝

1) բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով»:

Կարգի 14-րդ կետի 5)-րդ ենթակետով սահմանված է, որ.

«14. Գնահատող հանձնաժողովը՝

5) որոշում է գնման ընթացակարգի հաղթողին (հաղթողներին).»:

Կարգի 16-րդ կետով սահմանված է, որ.

«16. Գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:»:

Կարգի 27-րդ կետով սահմանված է, որ.

«27. Եթե գնահատող հանձնաժողովը չի ապահովում Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը, ապա քարտուղարը դրա մասին հայտնի դառնալու օրը գրավոր զեկուցում է պատվիրատուի ղեկավարին, որը՝

1) զեկուցագիրը ստանալու օրը՝

ա. հրամանով կասեցնում է հանձնաժողովի գործունեությունը: Եթե կասեցման հրամանով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա հանձնաժողովի գործունեությունը կասեցվում է մինչև երեք աշխատանքային օրով,

բ. հանձնարարում է պատվիրատուի իրավաբանական ծառայությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը տալ իրավական եզրակացություն: Իրավաբանական ծառայությունը կարող է եզրակացություն տալու համար պահանջել և ստանալ լրացուցիչ նյութեր.

2) իրավաբանական ծառայության գրավոր առաջարկի հիման վրա հարցի վերաբերյալ մասնագիտական եզրակացություն ստանալու նպատակով կարող է դիմել իրավասու (մասնագիտացված) մարմինների: Նման դեպքում հանձնաժողովի գործունեության կասեցման ժամկետը երկարացվում է մինչև եզրակացություն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ինչի կապակցությամբ պատվիրատուի ղեկավարի կողմից ընդունվում է հրաման.

3) իրավական եզրակացությունն ստանալուց հետո հրամանով՝

ա. հանձնաժողովի գործունեությունը վերականգնվում է, եթե իրավական եզրակացությամբ զեկուցագիրը համարվել է անհիմն, կամ

բ. հանձնարարվում է գնահատող հանձնաժողովին, ըստ իրավական եզրակացության, վերանայել հանձնաժողովի որոշումները: Զեկուցագիրը և իրավական եզրակացությունը կցվում են արձանագրությանը:»

Կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետով սահմանված է, որ.

«40. Հայտերի բացման և գնահատման նիստում՝

5) հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին:»:

Գտնում ենք, որ «ՋԱՏԵԳՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով Ընթացակարգի 1-ին, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ չափաբաժինների մասով պետք է ճանաչվեր առաջին տեղը զբաղեցրած մասնակից:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է՝ որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոցներ Ընթացակարգը կասեցնելու մասին:

2. Դադարեցնելու.

- Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.01.2021թ.-ի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացրած որոշումը,

- պայմանագիր կնքելու մասին որոշումը,

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին հանձնարարել «Ջատեգշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը Ընթացակարգի 1-ին, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ չափաբաժինների մասով ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից,

4. Պատվիրատուին հանձնարարել պայմանագրի կատարման ժամկետը հետաձգել:

Ընկերությունը 08.02.2021թ.-ին «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/05 ծածկագրով բողոքի շրջանակներում ներկայացրած պատասխանի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 2021թ. փետրվարի 04-ի ծանուցման և N ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-21/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Մ. Համբարյանի գրության (այսուհետև՝ գրություն) հայտնում եմ, որ.

1) գնումների պլանը հղում չի պարունակում Գնումների մասին ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 15-րդ հոդվածի 6-րդ մասին, մինչդեռ նախնական պլանում առկա է այդ հղումը:

2) գրությանը կցված Բուլղարիայի դեսպանատան հետ կնքված պայմանագրի 2-րդ հոդվածով և 11-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է, որ գումարները արդեն իսկ փոխանցված պետք է լիներին, հաշվի առնելով նաև գրության մեջ նշված վերջնաժամկետի հիմնավորվածության մասին պարզաբանումը, ինչը նշանակում է, որ նույնիսկ ընթացակարգի քարտուղարն է հիմնավորում գումարի առկայությունը:

3) Ընթացակարգի հրավերով սահմանված տոկոսների վրիպակ լինելու մասին հայտնում եմ, որ վրիպակ կարելի էր համարել, երբ չի նշվում, ոչ թե նշելով ասել «վրիպակ», հակառակ պարագայում, ցանկալի կազմակերպություն կարելի է ընտրել և կախված մրցակցությունից վերջում որոշել բանակցություն վարե՞լ համարելով վրիպակ, թ՞ե բանակցություն չվարել համարելով ճիշտ:

Հաշվի առնելով վերոգրյալը ավելի քան վստահ ենք, որ կոպտորեն խախտվել է մեր կազմակերպության իրավունքները և շահերը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ավելի քան վստահ ենք և հավատում ենք Ձեր օբյեկտիվ քննության արդյունքներին, կանխավ շնորհակալություն:»:

3. <u>«ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 02.02.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-Լ0/2/1266-2021 գրությամբ դիմել է «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ջատեգշին» ՍՊԸ-ի կողմից 01.02.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 04.02.2021թ.-ին ներկայացված գրությամբ ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 02.02.2021թ. գրության՝ կապված «Ջատեգշին» ՍՊԸ-ի կողմից 01.02.2021թ-ին ներկայացված բողոքի հետ, տեղեկացնում եմ Ձեզ, որ,

1) Գնումների պլան հրապարակվել է՝ հիմք ընդունելով Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 18-րդ կետը, այն է՝ «Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով: Ընդ որում, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով փոփոխություն է կատարում գնումների պլանում, իսկ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման նպատակով համաձայնագիր կնքելու ծանուցումը և կնքվելիք համաձայնագրի նախագիծը պայմանագիրը կնքած անձին է ուղարկում գնումների պլանում փոփոխությունը կատարվելու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում»:

Նախահաշվային միավորի գինը սահմանվել է շուկայի ուսումնասիրության հիման վրա:

2) Ինչ վերաբերում է հրավերում նշված ապրանքների մատակարարման վերջնաժամկետին, ապա նշեմ, որ անհրաժեշտ գույքը ձեռք է բերվելու Բոզղարիայի դեսպանատան կողմից հատկացվելիք ֆինանսական միջոցների հաշվին, իսկ պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման վերջնաժամկետը 17.03.2021թ. է (Պայմանագրի 6-րդ հոդված), այդ իսկ պատճառով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ սահմանվել է 01.03.2021թ.՝ հաշվի առնելով այն ժամանակահատվածը, որն անհրաժեշտ է մանկապարտեզի նոր մասնաշենքի կահավորման աշխատանքներն ավարտին հասցնելու համար (կցվում է դեսպանատան հետ կնքված պայմանագիրը):

3) Ընթացակարգի հրավերով սահմանված տոկոսները վրիպակ են:»:

Պատվիրատուն, ի լրումն «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի 04.02.2021թ.-ի գրության և ի պատասխան «Ջատեգշին» ՍՊԸ-ի ներկայացված դիրքորոշման 09.02.2021թ.-ին հայտնել է հետևյալը.

«Պատասխանելով «Ջատեգշին» ՍՊԸ-ի կողմից 08.02.2021թ.-ին ներկայացված գրությանը,

1) խնդրում եմ ուշադրություն դարձնել, որ Գնումների նախնական պլանը հրապարակվել է 2020թ. դեկտեմբերի 21-ին, որում ներառված է եղել միայն Մանկապարտեզի՝ հունվարի 11-ից մինչև փետրվարի 1-ը բնականոն աշխատանքը անխափան կազմակերպելու համար անհրաժեշտ Սննդամթերքը, որի համար այդ պահի դրությամբ ֆինանսական միջոցներ նախատեսված չեն եղել: Այդ իսկ պատճառով Գնումների պլանը հղում է պարունակել Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի վերաբերյալ: Դրանից հետո հրապարակված գնումների պլաններում ներառված են եղել այլ ապրանքներ, որոնցից մի մասի համար ֆինանսական միջոցներ նախատեսված եղել են, իսկ մյուս մասի համար՝ ոչ, այդ իսկ պատճառով 15.01.2021թ. հրապարակված գնումների պլանը հղում չի պարունակել Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի վերաբերյալ:

2) Բուլղարիայի դեսպանատան հետ պայմանագիրը կնքվել է 17.12.2020թ., և, ըստ Պայմանագրի Հոդված 6-ի, պայմանագրի տևողությունը 3 ամիս է եղել (մինչև 17.03.2021թ.): Հրավերը հրապարակվելու պահին բյուջեի փոփոխություն կատարված չի եղել (ֆինանսական միջոցներ նախատեսված չեն եղել):»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/05 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կահույքի ձեռքբերման նպատակով 15.01.2021թ.-ին հայտարարվել է «ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերով գնման առարկա է հանդիսանում կահույքի ձեռքբերումը, որոնք խմբավորված են «10» չափաբաժիններում:

iii. www.gnumner.am կայքում առկա տվյալների համաձայն՝ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից «ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգում ձեռքբերվելիք գնման առարկաները, սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով, 15.01.2021թ.-ին ներառվել են 2021թ.-ի գնումների պլանում:

iv. Գնումների պլանի համաձայն՝ գնման առարկա հանդիսացող թվով «10» չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար սահմանվել է մեկ միավորի գումար և քանակ:

v. Գնումների պլանը Պատվիրատուի կողմից հաստատվել և հրապարկվել է www.gnumner.am կայքում՝ 15.01.2021թ.-ին:

vi. Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 01.03.2021թ.-ը:

vii. Հրավերով սահմանվել է նաև թիվ 2 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը՝ համապատասխան տոկոսներով:

viii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.01.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ 1-ին, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ չափաբաժինների մասով «Ջատեգշին» ՍՊԸ-ն ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ:

ix. Նույն արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի որոշել է ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն կասեցնել հայտերի բացման նիստը և բանակցություններ վարելու նպատակով հրավիրել նիստ՝ 2021թ.-ի հունվարի 27-ին:

x. Հանձնաժողովի 27.01.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ընտրված և երկրորդ տեղ զբաղեցնող մասնակիցներին:

xi. www.gnumner.am կայքում 29.01.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ 5 օրացուցային օր:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Ջատեգշին» ՍՊԸ-ի կողմից 01.02.2021թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ ենթակետի (օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները) համաձայն՝ գնման գործընթաց՝ գնում կատարելու

նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 4-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը հետևյալ գործընթացների (գործառույթների) ամբողջությունն է՝

1) գնումների պլանավորում,

2) գնման գործընթացի կազմակերպում (ներառյալ գնման առարկայի բնութագրերի հաստատումը),

3) պայմանագրի կնքում,

4) պայմանագրի կատարում և կառավարում:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

ՀՀ կառավարության 2017 թվականի 13 ապրիլի N 390-Ն որոշմամբ հաստատված «Գնումների պլանի ձևը, դրա լրացման, հաստատման և հրապարակման» կարգի 2-րդ կետի.

1-ին ենթակետի համաձայն՝ 1-ին և 2-րդ սյունակներում լրացվում են գնումների միասնական անվանացանկով սահմանված (այսուհետ՝ անվանացանկ) միջանցիկ ծածկագիրը և անվանումը՝ անվանացանկի 4-րդ մակարդակին համապատասխան,

2-րդ ենթակետի համաձայն՝ 3-րդ սյունակում լրացվում է գնման ձևը: Ընդ որում, գնման ձևը լրացնելիս հաշվի է առնվում, որ գնման գինն անվանացանկի 2-րդ մակարդակում նշված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների խմբերի հանրագումարն է,

3-րդ ենթակետի համաձայն՝ 4-րդ սյունակում լրացվում է ... «դրամ» բառը, եթե սույն ենթակետի «ա»-«ժթ» ենթակետերում նշված չափման միավորներից որևէ մեկը կիրառելի չէ,

4-րդ ենթակետի համաձայն՝ 5-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքների, աշխատանքների և ծառայությունների մեկ միավորի գինը,

5-րդ ենթակետի համաձայն՝ 6-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության քանակը: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Քանակը» սյունակում նշվում է «1» թիվը,

6-րդ ենթակետի համաձայն՝ 7-րդ սյունակում նշվում է գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր գումարը՝ հազ. դրամով: Ընդ որում, եթե տվյալ տողի «Չափման միավորը» սյունակում նշված է «դրամ», ապա այդ տողի «Միավորի գինը» սյունակում նշված գումարը հավասար է 7-րդ սյունակում նշված գումարը բաժանած հազարի: Հակառակ դեպքում 7-րդ սյունակում նշվում է «Միավորի գինը» և «Քանակը» սյունակների արտադրյալը բաժանած հազարի:

Նույն կարգի 3-րդ և 9-րդ կետերի համաձայն՝ գնումների պլանում փոփոխությունները կատարվում են սույն կարգի 2-րդ կետով սահմանված պայմաններով լրացումներ կատարվելու ձևով: Գնումների պլանը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները և լրացումները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն սահմանված կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում, գնումների պլանում կատարված փոփոխությունները և լրացումները տեղեկագրում հրապարակվում են գնումների պլանի ամբողջական տեսքով:

Վերոնշյալ նորմատիվ իրավական ակտերի դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ գնման գործընթացը, Օրենքի իմաստով, գնում կատարելու նպատակով գնումների մասին

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջություն է, ներառյալ՝ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը: Իսկ արդեն Կարգով ՀՀ կառավարությունը սահմանել է, որ՝ գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է և գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում, անփոփելով, նշել, որ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսինքն՝ գնման գործընթաց սկսելու համար անհրաժեշտ է որպեսզի գնման առարկան ներառված լինի գնումների պլանում, համապատասխան ստորաբաժանման կողմից հաստատվի և գնումների համակարգողին ներկայացվի գնման հայտ, ձևավորվի հանձնաժողով, որը հաստատում է հրավերը և հրապարակում պաշտոնական տեղեկագրում, որի դեպքում է գնման գործընթացը համարվում սկսված:

Հակառակ դեպքում ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ **օրենքի նպատակին, սկզբունքներին և գործողության ոլորտին** նվիրված 3-րդ հոդվածի կարգավորման ընդհանուր համատեքստը, ինչի արդյունքում կայացված ցանկացած որոշմամբ կխախտվեն գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման սկզբունքներն ու գնումների մասին ՀՀ օրենսդրության նպատակը:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում

է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Կարգի 18-րդ կետի համաձայն՝ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն գնում կատարվելու դեպքում գնումների պլանում գնման առարկան ներառվում է առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո գնման պլանում համապատասխան լրացում կատարելու պայմանով:

Վերոնշյալ դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը, գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառվի գնումների պլանում՝ առանց գնման ընդհանուր գումարի նշման՝ բացառելով նաև միավոր գումարի նշումը: Այս կարգով է միայն հնարավոր փաստել և հաստատված համարել գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքի՝ գնումների պլանի առկա լինելու հանգամանքը:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Կարգի 40-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարում է բացված և հրապարակում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը՝ մեկ թվով արտահայտված:

Նույն կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Վկայակոչված նորմերի վերլուծությունից հետևում է, որ հայտերի բացման նիստում հրապարակվում է գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գինը: Եթե հայտերի գնահատման ընթացքում արձանագրվում է առաջարկված նվազագույն գների հավասարության, կամ եթե մասնակցել է մեկ մասնակից, կամ եթե հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման հայտով սահմանված գինը, կամ գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա

ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ պետք է վարվեն միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները:

Մասնակիցների՝ բացման նիստին ներկա չգտնվելու դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, որը վարվում է ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան տասներորդ աշխատանքային օրը:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից կահույքի ձեռքբերման նպատակով 15.01.2021թ.-ին հայտարարված «ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընթացակարգի հրավերով գնման առարկա է հանդիսանում կահույքի ձեռքբերումը, որոնք խմբավորված են «10» չափաբաժիններում: www.gnumner.am կայքում առկա տվյալների համաձայն՝ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից «ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով հայտարարված գնանշման հարցման ընթացակարգում ձեռքբերվելիք գնման առարկաները, սահմանված ԳՄԱ դասակարգման (CPV) կոդով, 15.01.2021թ.-ին ներառվել են 2021թ.-ի գնումների պլանում: Գնումների պլանի համաձայն՝ գնման առարկա հանդիսացող թվով «10» չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար սահմանվել է մեկ միավորի գումար և քանակ: Գնումների պլանը Պատվիրատուի կողմից հաստատվել և հրապարկվել է www.gnumner.am կայքում՝ 15.01.2021թ.-ին:

Հրավերի թիվ 1 հավելվածով նախատեսված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ապրանքի մատակարարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո մինչև 01.03.2021թ.-ը:

Հրավերով սահմանվել է նաև թիվ 2 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը՝ համապատասխան տոկոսներով:

Հանձնաժողովի 22.01.2021թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ 1-ին, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ չափաբաժինների մասով «Ջատեգշին» ՍՊԸ-ն ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ, իսկ 4-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-

րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ուստի որոշել է Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն կասեցնել հայտերի բացման նիստը և բանակցություններ վարելու նպատակով հրավիրել նիստ՝ 2021թ.-ի հունվարի 27-ին, իսկ 27.01.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է ընտրված և երկրորդ տեղ զբաղեցնող մասնակիցներին, ինչով պայմանավորված www.gnumner.am կայքում 29.01.2021թ.-ին հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ 5 օրացուցային օր:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, սույն գործում առկա փաստերը համադրելով նորմերին, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից «ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակագը կազմակերպվել է գնումների պլանի՝ առկայության պայմաններում:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում, գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ հրավիրելով այն պատճառաբանությամբ, որ գնման ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, գործել է ոչ իրավաչափ, քանի որ Հրավերով Պատվիրատուն չի սահմանել պայման այն մասին, որ Ընթացակարգը կազմակերպվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, հիմք ընդունելով նույն հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքների մատակարարման հստակ ժամկետները և Հրավերում առկա թիվ 2 հավելվածը՝ վճարման ժամանակացույցը:

Բացի այդ՝ Ընթացակարգով ձեռքբերվելիք ապրանքների համար 15.01.2021թ.-ին հաստատված և www.gnumner.am կայքում հրապարակված գնումների պլանով նախատեսված ԳՄԱ դասակարգման (CPV) միջանցիկ ծածկագրով սահմանված են գնման ենթակա ապրանքները, քանակները և միավորի գները՝ ֆինանսական միջոցները, որպիսի պայմաններում սույն գնման ընթացակարգով Հանձնաժողովն իրավասու չէր հրավիրելու բանակցություններ:

Ամբողջացնելով վերը թվարկված հանգամանքները և դրանք դիտարկելով Կարգի 16-18-րդ կետերի դրույթների համատեքստում, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ Հանձնաժողովի կողմից գնման գործընթացը չի կազմակերպվել Օրենքի

15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, այն է՝ առանց ֆինասական միջոցների առկայության:

Վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Հանձնաժողովը, մինչև գնման գործընթաց սկսելը, նախ՝ պետք է վերջնականապես հստակեցնի ֆինանսական միջոցների առկայությունը կամ բացակայությունը, այնուհետև նոր միայն սկսի գնման գործընթացը, և երկրորդ՝ նախատեսված գումարի առկայությունն արդեն իսկ բացառում է գնումը կատարել (գործընթացը հայտարարել) Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ առանց ֆինանսական միջոցների առկայության:

Ինչ վերաբերում է Ընկերության կողմից բողոքով ներկայացված պայմանագրի կատարման ժամկետը հետաձգելու պահանջին, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված է այն դեպքերը, երբ հնարավոր է երկարացնել պայմանագրի կատարման ժամկետը, այն է՝ ապրանքների մատակարարման համար սահմանված ժամկետը մեկ անգամ՝ մինչև 30 օրացուցային օրով հնարավոր է երկարաձգել՝ մինչև պայմանագրով ի սկզբանե սահմանված ժամկետը լրանալը՝ պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը, իսկ առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ պայմանագիր կնքելուց հետո է միայն հնարավոր իրականացնել պայմանագրի կատարման ժամկետի երկարացումը (հետաձգումը), ուստի Ընկերության բողոքը՝ վերոնշյալ պահանջի մասով, անհիմն է և ենթակա է մերժման:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում միաժամանակյա բանակցություններ հրավիրելու մասին կայացված որոշումը իրավաչափ չէ, ինչի արդյունքում Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջների խախտում, որպիսի պայմաններում «Ջատեգշին» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Ջատեգշին» ՍՊԸ-ի կողմից 01.02.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/05 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել «ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր քաղաքի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից կահույքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԱՔ-Թ4Մ-ԳՀԱՊՁԲ-21/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնել 22.01.2021թ.-ի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով կայացրած և պայմանագիր կնքելու մասին որոշումները,

- ընդունել «Ջատեգշին» ՍՊԸ-ին ընթացակարգի 1-ին, 5-րդ, 6-րդ, 8-րդ և 10-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին համապատասխան որոշում:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**